**Երկրորդ ընթերցում**
**Լրամշակված նախագիծ**

**Կ-1015-26.02.2025-ՊԱ-011**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 37-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Քրեական հետապնդում չհարուցելու, քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական վարույթ չնախաձեռնելու, քրեական վարույթը կարճելու կամ արդարացման դատավճռի դեպքում, բայց երբ խախտողի գործողություններում առկա են վարչական իրավախախտման հատկանիշներ, վարչական տույժը կարող է նշանակվել քրեական հետապնդում չհարուցելու, քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական վարույթը կարճելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշումը կամ քրեական վարույթ չնախաձեռնելու վերաբերյալ գրավոր տեղեկացումը կամ օրինական ուժի մեջ մտած արդարացման դատավճիռը գործի քննության համար լիազորված մարմնի (պաշտոնատար անձի) կողմից ստանալու օրվանից մեկ ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան քրեական հետապնդում չհարուցելու, քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական վարույթը կարճելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշումը կամ արդարացման դատավճիռն ուժի մեջ մտնելուց կամ քրեական վարույթ չնախաձեռնելուց հետո վեց ամսվա ընթացքում:»:

***Հոդված 2.*** Օրենսգրքի 123.1-ին հոդվածի՝

1) 1-ին մասում «տեղադրելը» բառը փոխարինել «տեղադրված վիճակում վարելը» բառերով.

2) 2-րդ մասում՝

ա. «տեղադրելը» բառը փոխարինել «տեղադրված վիճակում վարելը կամ շարժման ընթացքում դրանք օգտագործելը» բառերով,

բ. «չունեցող» բառից հետո լրացնել «կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված» բառերը:

***Հոդված 3.*** Օրենսգրքի 123.5-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասում «կեղծված կամ փոխարինված» բառերը փոխարինել «փոխարինված կամ այլ տրանսպորտային միջոցի» բառերով, իսկ «չունեցող» բառից հետո լրացնել «կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված» բառերը.

2) 11-րդ մասում «այն» բառից հետո լրացնել «հաշվառման» բառը.

3) 12-րդ մասում «միջոցի», «եթե», «սակայն» եւ «զույգ» բառերից հետո լրացնել «հաշվառման» բառը.

4) 13-րդ մասում «առանց», «այդ» եւ «զույգ» բառերից հետո լրացնել «հաշվառման» բառը.

5) 13.1-ին մասում «եթե» բառից հետո լրացնել «հաշվառման» բառը.

6) 17-րդ մասում «ժամկետով» բառից հետո լրացնել «, իսկ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձի նկատմամբ՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով» բառերը:

***Հոդված 4.*** Օրենսգրքի 124-րդ հոդվածի 31-րդ մասում «չունեցող» բառից հետո լրացնել «կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված» բառերը:

***Հոդված 5.*** Օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 5-րդ մասում «չունեցող» բառից հետո լրացնել «կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված» բառերը:

***Հոդված 6.*** Օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-5-րդ մասերում «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր» բառերը:

***Հոդված 7.*** Օրենսգրքի 128-րդ հոդվածի 3-րդ մասում «փաստաթղթերի» բառից հետո լրացնել «կամ վարորդական վկայականում նշված փաստաթղթերի կամ պարագաների» բառերը:

***Հոդված 8.*** Օրենսգրքի 129.3-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Տուգանային միավորի ձեւով վարչական տույժ նախատեսող՝ ճանապարհային երթեւեկության կանոնների (ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության) խախտումներ պարբերաբար կատարելը, այսինքն՝ տուգանային միավորի ձեւով վարչական տույժ նախատեսող հոդվածներով նախատեսված արարք կատարելը, եթե այդ իրավախախտման համար նախատեսված տուգանային միավորի եւ տվյալ տարում վարորդի նկատմամբ կիրառված տուգանային միավորների հանրագումարը կազմում է 13 կամ ավելի միավոր՝

առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցում՝ վեց ամիս ժամկետով:»:

***Հոդված 9.*** Օրենսգրքի 132-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «տեխնիկական անսարքություններ» բառերը փոխարինել «տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքություններ կամ պայմաններ» բառերով.

2) 2-րդ մասում «կեղծված կամ փոխարինված» բառերը փոխարինել «փոխարինված կամ այլ տրանսպորտային միջոցի» բառերով:

***Հոդված 10.*** Օրենսգրքի 140-րդ հոդվածի 2-րդ մասը «համաձայնեցման» բառից հետո լրացնել «կամ թույլտվության կամ համաձայնեցման պահանջների խախտմամբ» բառերով:

***Հոդված 11.*** Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) «(բացառությամբ 3-րդ եւ 4-րդ մասերով նախատեսված իրավախախտումների)» բառերը փոխարինել «(բացառությամբ 123.4-րդ հոդվածի 1-ին մասի՝ տրանսպորտային միջոցը Հայաստանի Հանրապետություն ներմուծելուց հետո օրենքով նախատեսված դեպքում դրա նկատմամբ այլ երկրում ծագած սեփականության իրավունքը սահմանված ժամկետում գրանցման չներկայացնելու, ինչպես նաեւ 3-րդ եւ 4-րդ մասերով նախատեսված իրավախախտումների)» բառերով.

2) «160-րդ» բառը փոխարինել «160-րդ (բացառությամբ 3-րդ, 4-րդ եւ 5-րդ մասերով նախատեսված իրավախախտումների)» բառերով.

3) «169.23-րդ» բառերը հանել:

***Հոդված 12.*** Օրենսգրքի 224.3-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը քննում է սույն օրենսգրքի 123.4-րդ հոդվածի 1-ին մասով (միայն 123.4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ տրանսպորտային միջոցը Հայաստանի Հանրապետություն ներմուծելուց հետո օրենքով նախատեսված դեպքում դրա նկատմամբ այլ երկրում ծագած սեփականության իրավունքը սահմանված ժամկետում գրանցման չներկայացնելու իրավախախտումների մասով), 160-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ եւ 5-րդ մասերով, 169.16-րդ հոդվածի 9-րդ, 10-րդ, 11-րդ մասերով, 169.23-րդ, 193.1-ին եւ 193.2-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:».

2) լրացնել 2-րդ մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված 123.4-րդ հոդվածի 1-ին մասով վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու եւ վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության հաշվառման-քննական գործունեության բնագավառի լիազոր ստորաբաժանման տարածքային բաժինների, իսկ 160-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ եւ 5-րդ մասերով, 169.16-րդ հոդվածի 9-րդ, 10-րդ, 11-րդ մասերով, 169.23-րդ, 193.1-ին եւ 193.2-րդ

հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության թույլտվության եւ լիցենզավորման գործունեության բնագավառի լիազոր ստորաբաժանման քաղաքացիական ծառայողները:»:

***Հոդված 13.*** Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասից «,169.16-րդ հոդվածի 9-րդ, 10-րդ մասերով» բառերը հանել:

***Հոդված 14.*** Օրենսգրքի 255-րդ հոդվածը լրացնել 6-րդ մասով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Եթե սույն օրենսգրքի 124.6-րդ եւ 126-րդ հոդվածներով նախատեսված իրավախախտումներն ի հայտ են գալիս փորձաքննության արդյունքում, ապա վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելիս վարչական իրավախախտում կատարած անձի ներկայությունը պարտադիր չէ: Այդ դեպքում արձանագրությունը ստորագրում է միայն այն կազմող անձը, եւ արձանագրության պատճենը, ինչպես նաեւ սույն օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված՝ վարչական իրավախախտում կատարած անձի իրավունքների ու պարտականությունների մասին ծանուցումը գործի քննության ժամանակի եւ տեղի մասին ծանուցման հետ միասին ուղարկում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձին:»:

***Հոդված 15.***

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներորդ օրը:

2. Սույն օրենքի 11-13-րդ հոդվածների գործողությունը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ծագող հարաբերությունների վրա:

*~~Առաջին ընթերցում~~*
*Երկրորդ ընթերցում*
*Լրամշակված նախագիծ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ~~ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ~~ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

~~***Հոդված 1.*** 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 25.1-ին հոդվածի 6-րդ մասում «կիրառվում է» բառերից հետո լրացնել «0.25,» թիվը:~~

***Հոդված 1 ~~2.~~*** 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 37-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Քրեական հետապնդում չհարուցելու, քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական վարույթ չնախաձեռնելու, քրեական վարույթը կարճելու կամ արդարացման դատավճռի դեպքում, բայց երբ խախտողի գործողություններում առկա են վարչական իրավախախտման հատկանիշներ, վարչական տույժը կարող է նշանակվել քրեական հետապնդում չհարուցելու, քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական վարույթը կարճելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշումը կամ քրեական վարույթ չնախաձեռնելու վերաբերյալ գրավոր տեղեկացումը կամ օրինական ուժի մեջ մտած արդարացման դատավճիռը գործի քննության համար լիազորված մարմնի (պաշտոնատար անձի) կողմից ստանալու օրվանից մեկ ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան քրեական հետապնդում չհարուցելու, քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական վարույթը կարճելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշումը կամ արդարացման դատավճիռն ուժի մեջ մտնելուց կամ քրեական վարույթ չնախաձեռնելուց հետո վեց ամսվա ընթացքում:»:

***Հոդված 2 ~~3~~.*** Օրենսգրքի 123.1-ին հոդվածի՝

1) 1-ին մասում «տեղադրելը» բառը փոխարինել «տեղադրված վիճակում վարելը» բառերով.

2) 2-րդ մասում՝

ա. «տեղադրելը» բառը փոխարինել «տեղադրված վիճակում վարելը կամ շարժման ընթացքում դրանք օգտագործելը» բառերով,

բ. «չունեցող» բառից հետո լրացնել «կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված» բառերը:

***Հոդված 3 4.*** Օրենսգրքի 123.5-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասում «կեղծված կամ փոխարինված» բառերը փոխարինել «փոխարինված կամ այլ տրանսպորտային միջոցի» բառերով, իսկ «չունեցող» բառից հետո լրացնել «կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված» բառերը.

2) 11-րդ մասում «այն» բառից հետո լրացնել «հաշվառման» բառը.

3) 12-րդ մասում «միջոցի», «եթե», «սակայն» եւ «զույգ» բառերից հետո լրացնել «հաշվառման» բառը.

4) 13-րդ մասում «առանց», «այդ» եւ «զույգ» բառերից հետո լրացնել «հաշվառման» բառը.

5) 13.1-ին մասում «եթե» բառից հետո լրացնել «հաշվառման» բառը.

6) 17-րդ մասում «ժամկետով» բառից հետո լրացնել «, իսկ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձի նկատմամբ՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով» բառերը:

***Հոդված 4 ~~5~~.*** Օրենսգրքի 124-րդ հոդվածի 31-րդ մասում «չունեցող» բառից հետո լրացնել «կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված» բառերը:

***Հոդված 5 ~~6~~.*** Օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 5-րդ մասում «չունեցող» բառից հետո լրացնել «կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված» բառերը:

***Հոդված 6 ~~7~~.*** Օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-5-րդ մասերում «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր» բառերը:

***Հոդված 7 ~~8~~.*** Օրենսգրքի 128-րդ հոդվածի 3-րդ մասում «փաստաթղթերի» բառից հետո լրացնել «կամ վարորդական վկայականում նշված փաստաթղթերի կամ պարագաների» բառերը:

***Հոդված 8 ~~9~~.*** Օրենսգրքի 129.3-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Տուգանային միավորի ձևով վարչական տույժ նախատեսող՝ ճանապարհային երթևեկության կանոնների (ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության) խախտումներ պարբերաբար կատարելը, այսինքն՝ տուգանային միավորի ձևով վարչական տույժ նախատեսող հոդվածներով նախատեսված արարք կատարելը, եթե այդ իրավախախտման համար նախատեսված տուգանային միավորի և տվյալ տարում վարորդի նկատմամբ կիրառված տուգանային միավորների հանրագումարը կազմում է ~~9~~ 13 կամ ավելի միավոր՝

առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցում՝ վեց ամիս ժամկետով:»:

***Հոդված 9 ~~10~~.*** Օրենսգրքի 132-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «տեխնիկական անսարքություններ» բառերը փոխարինել «տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքություններ կամ պայմաններ» բառերով.

2) 2-րդ մասում «կեղծված կամ փոխարինված» բառերը փոխարինել «փոխարինված կամ այլ տրանսպորտային միջոցի» բառերով:

***Հոդված 10 ~~11~~.*** Օրենսգրքի 140-րդ հոդվածի 2-րդ մասը «համաձայնեցման» բառից հետո լրացնել «կամ թույլտվության կամ համաձայնեցման պահանջների խախտմամբ» բառերով:

***Հոդված 11 ~~12~~.*** Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) «(բացառությամբ 3-րդ եւ 4-րդ մասերով նախատեսված իրավախախտումների)» բառերը փոխարինել «(բացառությամբ 123.4-րդ հոդվածի 1-ին մասի՝ տրանսպորտային միջոցը Հայաստանի Հանրապետություն ներմուծելուց հետո օրենքով նախատեսված դեպքում դրա նկատմամբ այլ երկրում ծագած սեփականության իրավունքը սահմանված ժամկետում գրանցման չներկայացնելու, ինչպես նաեւ 3-րդ եւ 4-րդ մասերով նախատեսված իրավախախտումների)» բառերով.

2) «160-րդ» բառը փոխարինել «160-րդ (բացառությամբ 3-րդ, 4-րդ եւ 5-րդ մասերով նախատեսված իրավախախտումների)» բառերով.

3) «169.23-րդ» բառերը հանել:

***Հոդված 12 ~~13~~.*** Օրենսգրքի 224.3-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը քննում է սույն օրենսգրքի 123.4-րդ հոդվածի 1-ին մասով (միայն 123.4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ տրանսպորտային միջոցը Հայաստանի Հանրապետություն ներմուծելուց հետո օրենքով նախատեսված դեպքում դրա նկատմամբ այլ երկրում ծագած սեփականության իրավունքը սահմանված ժամկետում գրանցման չներկայացնելու իրավախախտումների մասով), 160-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ եւ 5-րդ մասերով, 169.16-րդ հոդվածի 9-րդ, 10-րդ, 11-րդ մասերով, 169.23-րդ, 193.1-ին եւ 193.2-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:».

2) լրացնել 2-րդ մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված 123.4-րդ հոդվածի 1-ին մասով վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու եւ վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության հաշվառման-քննական գործունեության բնագավառի լիազոր ստորաբաժանման տարածքային բաժինների, իսկ 160-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ եւ 5-րդ մասերով, 169.16-րդ հոդվածի 9-րդ, 10-րդ, 11-րդ մասերով, 169.23-րդ, 193.1-ին եւ 193.2-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության թույլտվության եւ լիցենզավորման գործունեության բնագավառի լիազոր ստորաբաժանման քաղաքացիական ծառայողները:»:

***Հոդված 13 ~~14~~.*** Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասից «,169.16-րդ հոդվածի 9-րդ, 10-րդ մասերով» բառերը հանել:

***Հոդված 14 ~~15~~.*** Օրենսգրքի 255-րդ հոդվածը լրացնել 6-րդ մասով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Եթե սույն օրենսգրքի 124.6-րդ և 126-րդ հոդվածներով նախատեսված իրավախախտումներն ի հայտ են գալիս փորձաքննության արդյունքում, ապա վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելիս վարչական իրավախախտում կատարած անձի ներկայությունը պարտադիր չէ: Այդ դեպքում արձանագրությունը ստորագրում է միայն այն կազմող անձը, եւ արձանագրության պատճենը, ինչպես նաեւ սույն օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված՝ վարչական իրավախախտում կատարած անձի իրավունքների ու պարտականությունների մասին ծանուցումը գործի քննության ժամանակի եւ տեղի մասին ծանուցման հետ միասին ուղարկում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձին:»:

~~***Հոդված 16.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներորդ օրը:~~

***Հոդված 15.***

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներորդ օրը:

2. Սույն օրենքի 11-13-րդ հոդվածների գործողությունը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ծագող հարաբերությունների վրա:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1015-26.02.2025-ՊԱ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 1. | **ՀՀ կառավարություն** | **«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր, 1-ին հոդված և 9-րդ (լրամշակված տարբերակում՝ 8-րդ հոդված) հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող** | Նախագծի 1-ին հոդվածի և 9-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենսգրքի 129.3-րդ հոդվածի 1-ին մասի առնչությամբ հարկ է նկատել, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 2025 թվականի մարտի 26-ի ՀՕ-75-Ն օրենքով արդեն իսկ նախատեսվել են Օրենսգրքի 25.1-ին հոդվածի 6-րդ և 129.3-րդ հոդվածի 1-ին մասերում համապատասխանաբար տուգանային միավորների և վարելու իրավունք ունեցող անձանց հատկացվող միավորների վերաբերյալ | **Ընդունվել է:**<br>Կատարվել են համապատասխան փոփոխությունները: | **Ընդունվել է:** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | **Օրենսգրքի 129.3-րդ հոդվածի 1-ին մաս** | իրավակարգավորումներ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք նախագծից հանել 1-ին հոդվածը, վերնագիրը համապատասխանեցնել նախագծի բովանդակությանը և վերանայել նախագծի հոդվածների համարակալումը, իսկ 9-րդ հոդվածով **(լրամշակված տարբերակում՝ 8-րդ հոդված)** նոր խմբագրությամբ շարադրվող Օրենսգրքի 129.3-րդ հոդվածի 1-ին մասում «9» թիվը փոխարինել «13» թվով: | | |
| 2. | **ՀՀ կառավարություն** | **«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 16-րդ (լրամշակված տարբերակում՝ 15-րդ) հոդված** | Հաշվի առնելով Նախագծի 12-14-րդ (լրամշակված տարբերակում՝ 11-13-րդ) հոդվածների կարգավորումները, որոնցով նախատեսվում են մի շարք իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության ենթակայության փոփոխություններ, առաջարկում ենք Նախագծի 16-րդ **(լրամշակված տարբերակում՝ 15-րդ) հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ**.<br><br>«***Հոդված 15.***<br><br>1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում | **Ընդունվել է:**<br>Կատարվել են համապատասխան փոփոխությունները: | **Ընդունվել է:** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներորդ օրը:<br>2. Սույն օրենքի 11-13-րդ հոդվածների գործողությունը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ծագող հարաբերությունների վրա:»: | | |